

ըոնք ապրեցան ատ լեռներուն մէջ ու ըրին բարիք,
գլխնուն գնով, բոլոր փախստականներուն, պատսպա-
րելով անոնց հալածական երէի անդուհը խոր խորշերուն
մէջը իրենց «քաղաքին», ու մեռան, այծի սէրէն դուրս
ուրիշ նայուածք իսկ չճանչցած: Բայց հովիւը չէ, որ պիտի
կարդա՛յ մեր վէպերը:

Անոր վստահուած գաղտնիքը ծովուն տակ ինկած
ջաղացքի քարն էր: Ու խօսելու դժկամութիւնը՝ ուրիշ
գրաւական: Անիկա մէկ հատիկ մարդն էր, որ կը ճանչ-
նար նաեւ քարայրին յատակէն խորացող ուղին, որ ա-
ւանդութեան մը համաձայն կը հասնէր քառորդ մը ան-
դին, անտառին միւս թափին ապահով ծառաստան մը,
ուր կրնային պահուիլ 10 օր, հացի տեղ կերակրուելով
նուլպանով, քըքրկիչով (*): Իրակա՞ն, այդ ընդերկրեայ
անցքը: Կ'ըսէին, թէեւ ես տեսած չէի փորձողը: Իմ գիտ-
ցածներէս, Ակոն, որ երկու Հայր մերի տեւողութեան
կ'իջնար վար, ու կը դառնար, կանչելովս: Ուրիշներ ատկէ
ալ քիչ կը յանդգնէին: Հեքիաթ չէ ասիկա, որպէսզի
սուզուիմ անոնց ետեւէն: Չանց կ'ընեմ ինծի պատմուած
նկարագրութիւնը, գետնի տակով զբաղելու համար չը-
կրնալով լքել ողբերգութիւնը, որ երեսինն է գետնին:-
Բոլոր անխնամ քարայրներուն սպասող բախտը, այ-
սինքն՝ անցքին խզումը կամարէն փրթած քարերուն մի-
ջոցով: Անոր մուտքը պաշտպանուած էր ժայռով մը, որ
ճարտար յարդարանքով մը կը ծառայէր օճախին իբր կրո-
նակ: Ոչ մէկը միտքէն պիտի անցընէր այդ մոխրաթա-
թախ քարին դպիլ:

Հովիւ՛ւր:

- Դառնալու էր անշուշտ իրիկուան դէմ:

(*) Ճուլպանտ, քըքրկիչ.- խոտեր, որոնք կ'ուտուին ու ամէն ժամանակ
հանդիպելի են: